Մարօն նստեց իմ մօտ, իմ ձեռքը առեց իր երկու ափերի մէջ, եւ դրեց իր ծնկի վրայ: Նա ուրախ, որպէս միշտ, սկսեց պատմել՝ թէ առաւօտեան իր հօրից իմացաւ, որ իմ առողջութիւնը վատ էր. նա վազեց դէպի եղբօր ագարակը, տեսաւ, ես այնտեղ չկայի: Այնտեղից շտապեց դէպի արտը, Հասօի մօտ. եղբօրից այսքանը իացաւ, թէ նա տեսել էր ինձ կէսօրից առաջ, բայց չգիտէր, ու՛ր կամ ո՛ր կողմը գնացի: Նա երկար որոնեց ինձ, մինչեւ արեւը մտաւ եւ օրը մթնեց. յետոյ նրան հանդիպեց մի բոշայ կին, որ ասաց, թէ տեսել էր ինձ «Քանդոած մատուռի» մօտ:

— Ղու ճանաչում ե՞ս այն կը նկան, — հարցրի ես:

— Երկրորդ անգամն է, որ տեսնում եմ նրան, — պատասխանեց Մարօն:

— Առաջին անգամն ե՞րբ էր:

— Երկու տարի առաջ: Ես տեսայ նրան միեւնոյն հագուստով, որպէս այսօր, էլի այն փոքրիկ երեխան իր հետն էր, որին այսօր տեսայ: Ի՜նչ լաւ երեխայ է, Ֆարհատ, այնքան սիրտս սիրեց նրան, որ բռնեցի երեսը պաչ արի: Ախար մե՜ղք է անօրէնի երեսը պաչ անելը. նրա ճակատին մեռոն չէ քսած. բայց ես նրան պաչ արի.նա այնպէս լաւ երեխայ էր:

— Որտե՞ղ դու տեսար նրան երկու տարի առաջ:

Մարօն նկատելով, իր պատմութիւնը հետաքրքրում էր ինձ, շարունակեց.

— Ես տեսայ նրան այս ձորի մէջ, այս մատուռի մօտ. նա խօսում էր Կարօյի հետ: Ի՞նչ էր խօսում, ես չիմացայ, նրա համար, որ նրանց լեզուն չէի հասկանում: Քանի օրից յետոյ Կարօն անյայտացաւ մեր տանից. մենք չիմացանք թէ ուր գնաց: Քանի տարի էր նրանից ոչ մի լուր չունէինք: Կարօյի գնալուց յետոյ, այն կինն էլ չերեւաց: Այս անգամին, երբ Կարօն կրկին լուս ընկաւ, բոշան էլի ման է գալիս մեր կողմերում:

— Այն ժամանակ Ասլանը եւ Սագօն Կարօյի հե՞տ էին:

— Չէ՛, նրանք չկային: Այս անգամ ետ դարձան միասին: Երկու շաբաթ է, ինչ որ եկել են:

— Դու այսօր Կարօյին չե՞ս տեսել:

— Ես քեզ ասացի, որ տանից դուրս եմ եկել առաւօտեան.մինչեւ հիմա էլ սար, ձոր չեմ թողել, քո ետնեն ման եմ եկել: Հիմա ինչպէ՞ս է քեփդ, դու ողջ օրը հաց չես կերել. ի՜նչ գիժ տղայ ես,Ֆարհատ:

— Կարօն լաւ տղայ է, այնպէս չէ՞: